ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

1988 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԳՆԵԼ ԱՂՎԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՓԱՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշման հավելվածի 9.1-ին կետի՝ հիմք ընդունելով Գնել Աղվանի Մանուկյանի դիմումը, Նորիկ Գևորգի Մագոյանի, Համլետ Արտաշեսի Մանուկյանի, Գոհար Հայկազի Մատինյանի հայտարարությունները, անձնագրերը, ամուսնության վկայականը, ծննդյան վկայականները, ՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրի բնակիչ Գնել Աղվանի Մանուկյանի ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ բաղկացած է եղել չորս անձից.

Գնել Աղվանի Մանուկյան՝ ծնված 24.11.1961 թվականին,

Զվարթ Սենիկի Ոսկանյան՝ ծնված 12.01.1964 թվականին, մահացած 11.07.2019 թվականին,

Էդվարդ Գնելի Մանուկյան՝ ծնված 19.08.1985 թվականին,

Ինեսիա Գնելի Մանուկյան՝ ծնված 06.08.1986 թվականին:

2. Հաստատել այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրի բնակիչ Գնել Աղվանի Մանուկյանի ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Արևաշող գյուղում ունեցել է բնակելի տուն, որը երկրաշարժի հետևանքով քանդվել է: